Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ ***2021 թվականի մարտի 6-ին (շաբաթ օր), ժամը 09^{30}-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.***

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.

- ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն:

1. Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2021 թվականի մարտի 6-ին, ժամը 09^{30}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17^{30}-ին**:

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2021 թվականի փետրվարի 6-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի փետրվարի 11-ին (ներառյալ)**:

3. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է **2021 թվականի փետրվարի 12-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի մարտի 4-ին, ժամը 18^{00}-ին**:

4. **2021 թվականի մարտի 5-ը համարվում է լռության օր:**

5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.02.2021թ. թիվ 15-Լ որոշումը

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին ծանուցումը

Բեռնել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2021 թվականի մարտի 6-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ